# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ-ն ԿՈՏ-ՀՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ | ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ | ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ | ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ | Զգեստահարանը 5 դռնանի է, այն ամբողջությամբ, ներառյալ միջնապատերը պատրաստված է 18 մմ հաստությամբ լամինացված ФՏՍ E0դասից, որոնց աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC կամ համարժեք): Հետնապատը 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) (կամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | համարժեք) է և նույն լամինացված ՓՏՍ E0դասի գույնի: Աշխատանքային հարթության եզրերը լավ հղկված ու մշակված են, առանց ծլեպների, առջևի կլորացված հատուկ դետալներ: Զգեստապահարանի արտաքին չափսերն են՝ 1708 x 300 x 1644 մմ (Լ x Խ x Բ), յուրաքանչյուր սեկցիայի ներսի չափսերն են՝ 320 x 300 x 1300 մմ (Լ x Խ x Բ) մմ: Բոլոր 5 բաժիններում էլ, ողջ լայնությամբ և խորությամբ նախատեսված է՝ վերևի մասում գլխարկի, իսկ ներքևում կոշիկների համար առանձնացված հետևյալ չափսերի՝ 320 x 300 x 200 մմ (Լ x Խ x Բ) տեղեր (բաց դարակներ): Բոլոր սեկցիաներում գլխարկների դարակի տակից ամրացված է մետաղական բարձրորակ երկտեղանի կախիչ: Դռներն ամրացված են և փակվում են 3-ական բարձրորակ ծխնիներով: Բոլոր միացումներն իրականացված են թաքնված ամրակցումներով: Այն ունի չորս առանձին փայտյա, կամ մետաղական 300 մմ բարձրությամբ ոտքեր, որոնք տեղադրվում են |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | եզրերից 50 մմ դեպի ներս: Ոտքերի հատակին հպվող հատվածի եզրերի տակից ամրացված է պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը` առնվազն 8 մմ է:Ամուր է` պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը կպարտավորվի սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից է: Կապահովվի էսթետիկությունը, մասնավորապես` գունավորումը և/կամ նկարազարդումը կատարված է որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների և ծշեպների: Կապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն` մատակարարվող գույքը համապատասխան է հասակային խմբի չափսային պահանջներով, ցանկալի է նաև լինի կարգավորման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Գույնը նախապես կհամաձայնեցվի մանկապարտեզի տնօրինության հետ: Նմուշները մինչ մատակարարումը կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ կներկայացվեն ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Կսահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա կկատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը կկատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը կկատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԿՊՏ-ՀՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |